ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

N 03/10.1/10055-13

«22» 08 2013թ.

*<<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>> ՀԿ-ի իրավաբան պարոն Գ.Հայրապետյանին*

Տեղեկացնում եմ, որ ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Վ.Գաբրիելյանին հասցեագրված Ձեր 14.08.2013թ. № 205-3 գրությունը ՀՀ վարչապետի 20.08.2013թ. №02/23.19/12355-13 հանձնարարականով ուղարկվել է ՀՀ տրանսպորտի և կապի, ՀՀ ֆինանսների, ՀՀ արդարադատության նախարարություններ և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ համատեղ քննարկելու և Ձեզ պատասխանելու համար:

Ձեր կողմից բարձրացված հարցի կապակցությամբ հայտնում եմ, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 854-րդ հոդվածով սահմանված է, որ բեռների, ուղևորների և ուղեբեռների փոխադրումն իրականացվում է փոխադրման պայմանագրի հիման վրա: Նույն օրենսգրքի 856-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ ուղևորի փոխադրման պայմանագրի կնքումը հավաստվում է տոմսով, իսկ ուղեբեռի հանձնումը՝ ուղեբեռային անդորրագրով:

Միաժամանակ, հայտնում եմ, որ առանձին խմբերի քաղաքացիների երթևեկությունը կարող է իրականացվել առանց տոմսավորման, եթե նրանք ունեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված տրանսպորտի առանձին տեսակներից անվճար օգտվելու արտոնություններ (օրինակ՝ անվճար երթևեկության վկայական, կամ մինչև 7 տարեկան երեխաները, և այլն):

*Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Նալբանդյան 28 Հեռ.՝ (374 10) 59 00 05, Ֆաքս՝ (374 10) 59 00 17, էլ. փոստ՝ deputyminister@mtc.am